

Lm4. v  
68

A<sup>o</sup> 710

2 000

Лиц  
Б. 8


№ 710

# ՄԿՆԻԿԸ

(LA SOURICIERE, ИЗЪ ЗА МЫШЕНКА)

Վ.ՕԴՎ.Ի. 1 ԱՐՄ.Հ., ՀԵՂ. ԱՐՄՈՒՅ ԹՈՅՈՒ,

ՓՈԽԱԴՐ. ՌՈՒՍ. Ա. ՎՐՈՅՔԻ



1903.

1897

# ՄԿՆԻԿՈՂ

Վ.ՕՒ.Վ. 1 ԱՐԱՐ., ՀԵՊ. ԱՐՄԱՆ ՌԶՋՈՒ, ՓՈԽԱԴՐ. Ա. Վ.ՐՈՅ. Վ.

## Ա. Ե Զ Բ Ե Ա Բ

ԳԱՅԻԱՆՔ ՍԵՐԱՎԵԱՆ, մատաղասա այրի . . Օ. Ա.ԽԱՇԵԱՆ  
ԱՐՏԱՇԵԱՆ ՃԵՐՄԱԿԵԱՆ, Բագրեցի վասարան Պ. ՎՐԱՅՐ.

## ՉԱՅՆԵՐ ԲԵՄԻ ԵՏԵՒԻՑ.

Անցր Թիֆլիսում և պատահում. Սերովեանի տան:

(Առաջին անգամ ներկայացւում է Արմադիրամ դեկտ. 23-ին 1896 թ.)

Տեսարանը ներկայացնելում է միջակ, բայց լաւ զարդարուած սենեակ. նանդիսականների ձախ կողմում առաջին պլանի վրայ միջակ մեծուրեամ բազմոց, սեղան եւ երկու բազկարուներ: Երկրորդ պլանի վրայ դուռ. մէջ տեղում պարտիզի վրայ նայող մի մեծ պատուհան, աջ եւ ձախ լուսամուտներ եւ արռոներ, աջ կողմ առաջին պլանի վրայ վառարան, արռուակ եւ երկու բազկարուներ, բեմի գորգով ծածկւած է:

## I

## ԳԱՅԻԱՆՔ.

(Զեղագործի զամբիւղը բունած արագ մէնում է եւ դրան մօսակայ բազկարուի վրայ զնելուց յետյ փակում է դուռը). Ծուշանի՛կ, Ծուշանի՛կ, կամչի՛ր սպասառոքին, թակարզը թող լարէ, նայեցէք գանի՛քը, նախառենեակը, ամբողջ սունը տակն ու վրայ արէք, միայն թէ բանեցէք նրան: (Գնում է դունից դուրս եւ նորից արագ վերադառնում): Բայց զիսաւուրաբար այս զուսը բաց չանէք, լսեցի՛ք . . . ես առելի կը համաձայնիմ յաւիսեանս այսաեղ նստել, քան թէ կրկին տեսնել այդ զզուելի կննդանուն, ես ուղղակի վախիցս կը մեռնեմ:

28-69

68-98



(Ասում է) Երեւակայեցէք թէ ի՞նչ պատահեց դահլիճումն, մո՛ւկ, մի զղուելի փոքրիկ մուկ, սովորաբի բառն. ձմարիս որ շուտով բնակարգն պիտի վնասում ինձ համար օգագարիկի մէջ: Ես պատուհանի մօն հանգիստ նստած աշխատում էի, կորցրի բրդի կծիկը, ծովում եմ վերցնելու, մէկ էլ յանկարծ մի մուկ, մի փոքրիկ զղուելի մուկ, ուզգակի ինձ վերայ է յարձակվում եւ աշխատում շրջազգեստիս ծալքերումը թագնի, վեր եմ թռչում, «օգնութիւն» եւ կանչում եւ ինքնարերաբար վերցնում այս զամբուղը, նստավում եմ դահլիճի միջով սեղանատուն, հիւրասենեալը եւ այստեղից էլ ուզգակի այստեղ. (Խօսենում է հայեղուն) Տէք Սրառուծ, այս ի՞նչ է իմ կերպարանքը, կատարեալ ի ելաղար. մինչդեռ ամեն մի բոսէ այստեղ կարող է զալ Բագւեցի փաստաբան պարոն ձերմակեանը, որ իմ ձեռքը խնդրովներից մէկն է: Ահա երեք ամիս է արգէն, որ նա սբակում է ինձ իւր նամակներով եւ վերջութէս այսօր միայն վճռեցի նրան այստեղ ընդունել. Ծզիսեմ թէ նա ինչպէս կարողացած իմ հօրաքրոջս տիկին Շողակաթի համականքը գրաւելի Սյժմ նա գալիս է այստեղ իրեւ հօրաքրոջս գործերի հաւատաբարութը, բայց այս խորամանկութիւնը նրան չի յաջողվի. ևս նրան ուզգակի վճռեկամը կերպար կասեմ, թէ չեմ կամենում երիքորդ անդամ ամուսնանալ եւ իմ ձեռքս ու սաքը կաշկանդել. ո՞չ, ես կատարեալ ազատութիւն եմ ցանկանում. բայց ինչպէս նրան ընդունեմ երբ նա այդ անպիտան անսասունը բանելուց առաջ գայ:

Թեմի ետեւից ձայն.

Տիկին, տիկին:

Գայիշանէ.

Ի՞նչ, բռնւեց:

Թեմի ետեւից ձայն.

Ո՞չ, մի ինչ որ պարոն է:

Գայիշանէ.

Նա՞ բռնւեց:

Թեմի ետեւից ձայն.

Ո՞չ, տիկին, մի ինչ որ պարոն կամենում է ձեզ տեսնել: Գայիշանէ.

(Առանձին) Այդ էր պակաս: (բարձր) Երեւի այդ պարունը . . .

Թեմի ետեւից ձայն.

Ահա նրա այցեասմուը (լալում է դրան բանալին դարձնելու ձայնը):

Գայիշանէ.

Ո՞չ, Գրիգոր. մի բաց տնիք, ի սկը Աստուծոյ. մի բաց անիրու այցեասմուը ձեզքի միջով առուր է. Վեցենում է այցետունը) ներց նա ինքն է. ինչոք ս անեմ, անկարելի է նպան շնորհնել. մեր այս ըրտան rendez-vous-ն ևս ինքս նշանակեցի, չը որ նա զրա համար յասկապէս Բագւեցի եկաւել. վերջապէս աղամարդու ներկայութիւնը կը հանգստացնէ ինձ եւ մոռացնել կը այց զղուելի անսասունի գոյութիւնը . . . Ահա, հիմանալի միաք (Խօսենում է դրան) Գրիգոր. ասա այդ պարունին, որ այս զրան բանալին վշացած է եւ թէ արգէն ուզարեկը էք փականագործ կանչելու, հարցրէք նրան, թէ աբգեօք չի կամենաց պարտէղով մինցնել եւ պատուհանից այստեղ մտնել. եթէ համաձայնուի, այն ժամանակից պատուհանին մօտեցրէք պարտէղի փոքրիկ սանդուխքը. հասկացա՞ք. զնացէ՞ք

Թեմի ետեւից ձայն.

Շատ բարի: / Դպրու յու.

Գայիշանէ.

Այժմ ես ապահով եմ, որ պարոն ձերմակեանի հետ միամին մուկը ներս չի մտնի. (Խօսենում է հայեղուն) բայց եւ այնպէս պէտք է զղուխս յարողարել. չեմ կասկածում, որ նա ինքունի իմ առաջարկութիւնը եւ ներկայանաց ինձ այնպէս՝ ինչպէս Ռոմեն Զիւլիէսակի մօն. . . երեւակայում եմ, թէ նա որքա՞ն գոն է եւ երջանիկ (Խօսենում է պատուհանին) ահա նա զալիս է մեծ ծառուղու միջով. . . հրմ, հրմ. . . բաւականին գեղեցիկ է . . . եւ կարծեմ մտազբաղ . . . անշուշտ այս ճամ-

Աշխանց

բորդութիւնը նրան ախորժելի չէ: Աստուած իմ. ի՞նչ պարագաներով նա զիտում է սանգուխքը... հա՛, հա՛, հա՛, (պատուհանից հեռանում է) երեսի շատ քաջերից չէ: Հօրաքոյրս զրել էր ինձ, թէ նա աղմիւ, զարգացած, կրթուած մարդ է, մի փոքր էլ առարջնակ, բայց վնաս չտնէ, և եթէ ևս երկրորդ անգամ ամուսնանալ կամենայի, շատ կարելի էք... Կաթոյիստ ի՞նչ մտքեր են. ևս կամենում եմ աղատ լինել ևս աղպէս էլ նրան կը յայնեմ. (պատուհանին մօտենալով) ներեց քէ՛ք, պարսն ձերմակեան... .

### Ճերմակեանը բեմի ետեւից.

Աղաւոչի ա. Գայիանէ, ևս ձեր ոչ մի ներովութիւնը չնմ ընդունիք ևս այսուել ի՞նչ ներովութիւն կարող է լինել, ընդհակառակը, ևս այժմ ինձ երջանիկ եմ զգում, ևս բազգաւոր եմ որ, որ... . (Գրիգորին) սանդուխքը պինդ պահի՞ր, ի՞նչ ամո՞ւր է, լա՛ւ, հորհակալ եմ (Գայիանէին) ևս բազգաւոր եմ որ այս ճանապարհով եմ զալիս ձեզ մօտ, սիրոյ ճանապարհով, բայց վախենում եմ որ չլինի թէ... .

### Գայիանէ.

(Չեռքը ճերմակեանին տարով) Ահա ձեզ իմ ձեռքը, յուսով եմ որ կը համաձայնէք իմ օգնութիւնը ընդունելու:

### Ճերմակեան.

Ձեր խօսքերը յուսոց ճառագլխինք են ինձ համար (բոնում և ձեռից ևս պատուհանից ներ բոցում)

## II

### ԳԱՅԻԻՍՆԵՐ ԵՎ ՃԵՐՄԱԿԵԱՆՆ.

#### Ճերմակեան.

(Հովհանոնով) Շնորհակալ եմ ձեղանից: (Խոնարհելով) Տ. Գայիանէ:

#### Գայիանէ.

(Նոյնպէս) Պ. Ճերմակեան:

#### Ճերմակեան.

Նախ եւ առաջ թողլ տւէք ինձ չնորհակալ լինել ձեղանից (Այս այսպիսի սիրավելու ամորթինակ ընդունելութեան համար) և այլու այսպիսի սիրավելու ամորթինակ ընդունելութեան համար:

#### Գայիանէ.

Ես յուղուած եմ, բայց ի՞նչ արած, յանցանքը իմը չէ. յանցաւորը այդ զգուելի անասունն է... . (Յիշելով) այսինքն ուզում էի ասել այդ պականագործը որ այսպէս ուշանում է. զիսենալով որ դուք գործի համար էք գալիս ևս հետու տեղից, վճռեցի ճանապարհը ցոյց տալ Չեզ... .

#### Ճերմակեան.

Ճանապարհ գէպի արքայութիւն. ո՞հ, հիանալի է... . (Երեսը սրբում է): Ահա հանցանք:

#### Գայիանէ.

Դուք յոգնած էք, կարծեմ... . Այս քը անարդ ուն

Ճերմակեան. Ոչինչ, ևս արքայութիւնն մէջն եմ, ևս այդ սովոն ներգութեան վարձատրութիւնն է:

#### Գայիանէ.

Դուք շատ սիրավել էք, նստեցէք, ինսպրեմ, հօրաքրոջ մօտիցն էք գալիս. ինչպէս է նա, ևս նրան չապ եմ սիրում. եւ ո՞րքան ժամանակ է չեմ ասել, սիրելի հօրքութիւն, միշտ նախազգուշացնող, բա՛րի, սիրո՛ղ... .

#### Ճերմակեան.

Եւ եթէ չեմ սիրալւում, հօրաքրոջ բոլոր բարեմանութիւնները անցան իւր եղրօր աղջկան:

#### Գայիանէ.

Ո՞հ, ևս արժանի չեմ այգպիսի գովասանքի, մանաւանդ որ սիրենը ոչ թէ իմ, այլ ճանգուցեալ ամուսնոյն հօրաքրոն է:

#### Ճերմակեան.

Ա՞հ, ներկեցէք. այս, այս, յիշում եմ, ձեր աղնիւ ամուսնոր, Յովհաննէսը ասել էր ինձ այդ մասին:

Գայիանէ.

Դուք ճանաչում եք ամուսնուս:

Ճերմակիան.

Այո՛, ճանաչում եի, խե՞ղճը, մենք միասին ենք սովորել,  
յետոյ ես հայրենիքս զնացի, բայց եւ մենք շատ սակաւ  
էնք անսակցում, ճուառութիւնը գլխաւարաբար, իս զբաղ-  
մունքներս, գործերս . . . ա՛հ դուք չէք կարող երեւակայել  
թէ որքա՞ն դործ ունիմ . . .

Գայիանէ.

Յիշաւի:

Ճերմակիան.

Սարսափե՛լի, սարսափե՛լի, մենք, վաստարաններս շատ  
ենք աշխատում, իսկ իմ մասնագիտութիւնս . . .

Գայիանէ.

Իսկ ձեր մասնագիտութի՞ւնը . . .

Ճերմակիան.

Ամուսնալուծական խնդիրներն են, իմ գործունեութեանս  
միջացին 46 ամուսնալուծական գաղտել եմ ունեցել:

Գայիանէ.

Իսկ տարել է՞ք՝

Ճերմակիան.

47, սրանցից մէկը կրկնակնութեան մասին էր. ա՛հ տ.  
Գայիանէ, սա մի զարմանալի, հետաքրքիր գործ էր. իմ պաշտ-  
պանեալս 166-րորդ յօդուածի համաձայն պէտք է դասա-  
պարաւէր եւ ես գործը արդէն ասանուլ էի տալիս, յանկարծ  
զիսումս մի գեղեցիկ խոպանրդ է ծագում. «Պարոնայք դա-  
տաւորնե՛ր—գոչեցի ես—ինչպէ՞ս, դուք կամնում էք դասա-  
պարաւէլ մի խելագա՞րի, այո՛, մի խելագարի, կա՞յ արդե՞օք  
առողջ դասուլութեամբ մի մարդ, որ իւր կինը թվականուց յե-  
տոյ՝ կամնար մէկ ուրիշը առանել պարոնայք դատաւորներ,  
մի՞թէ ձեզնից մէկը այրի մնալու բազգաւորութիւնը ունե-  
նալով, այսինքն ներեցի՞ք, դժբաղդութիւնը ու գում էի ասել,

2  
կրկն անգամ կամնար ընտանեկան կեանքի քաղցրութիւնը  
վայելել, դուք լսում էք, իսկ այդ մարդը ներփք չնամարելով  
իսր ունեցած կինը՝ ուզում է առնել եւ միւսը, ունի մի զո-  
քանչ կամնում է մէկ ուրիշն էլ ունենալ. մի՞թէ այս մօտէ ունեց-  
րանականութեան, մի՞թէ մեղանից մէկը այսպիսի բան կարող  
է անել. Ո՛չ, պարոնայք դատաւորներ, նա խելագար է, եւ  
դուք իրաւունք չունէ՞ք նրան զատապարտելու» . . . եւ գործը  
տպայ. — դուք ի՞նչ եք ասում որան:

Գայիանէ.

Ես կասեմ թէ դուք բաւականին տարօրինակ հայեացք  
ունիք ամուսնութեան մասին:

Ճերմակիան.

8. Գայիանէ, լսեցէ՞ք ինձ, անշուշտ ձեզ յայտնի է, որ  
ճանապարհորդները ի՞նչ տեղ էլ որ լինեն, ի՞նչ որ էլ տեսնեն  
օտար երկներում, ինչով էլ որ գրաւեն, ամէն բանից աւել-  
լի գարձեալ իրանց հայրենիքի մասին են մտածում. այնպէս  
էլ ես. ուրիշների կապերը լուծելով այն եղակացութեան հա-  
սայ, թէ միայն ընտանեկան կեանքի մէջ մարդս կարող է եր-  
ջանկութիւն գտնել, թէպէտ եւ դուք այդ բանը զիտէք. Ահա  
3 ամիս է արդէն, որ ես աշխատում եմ ձեր համակրութիւնը  
գրաւել, ես ձեզ սիրում եմ բուն, բոցավառ եւ իմ հայրե-  
նիքի բազմ ջերմութեամբ, այրւող նաւթահորերի ահագին  
բոցերով . . .

Գայիանէ.

Սպասեցէ՞ք, սպասեցէ՞ք, դուք ինձ վախեցնում էք,  
սպասեցէ՞ք, մի՞թէ բոլոր Բագուցիները այսպէս ջերմ կերպով  
են արտապայտում իրանց սէրը:

Ճերմակիան.

Բոլո՞րը, մենք թագուցիքս ուզզակի մեր նպատակին զի-  
մողներ ենք, եւ ո՛չ մի արգելք չէ կարող մեղ կանգնեցնել,  
ո՛չ ծովի ալիքները, ոչ փոթորկի մանչիւնը, ոչ անամցանելի  
անտառները, ոչ անդունգները, ո՛չ վայրենի գաղանները, ո՛չ . . .

Գայիսեն:

Բաւակա՞ն է, բաւակա՞ն, անոնում եմ որ զուք այնպէս պերձախօսութեամբ կայսերած էք ձեր սէրր, ինչպէս եւ խօսում էք դաստամում, բայց միեւնոյն է, ևս հաստատապէս վճռել եմ երկրորդ անգամ չ'ամռանանալ:

Ճերմակեան:

Երբէ՞ք:

Գայիսեն:

Երբէ՞ք:

Ճերմակեան:

Այսպէս խօսելով, զուք ինձ դուռն էք ցոյց տալիս . . . շատ բարի, պատիւ ունիմ ողջունելու . . . (դիմում է դիպի պատուհանը):

Գայիսեն:

(Դրան ականց դնելով) Կացէ՞ք, պարտն Ճերմակեան, կարծեմ թէ մէկը զուռը ճանկառում է: [Հարծեմ թէ մէկը զուռը ճանկառում է:]

Ո՞նչուչ փականագործն է (պատուհանից հեռանում է) շատ ուրախ եմ եւ բացարձակ յանում եմ, որ կամինում եմ աւելի շուտ այս ճանապարհ (դուռը ցոյց տալով) զնալ՝ քան թէ միւս:

Գայիսեն:

(Վրդոված) Սպասեցէ՞ք, սպասեցէ՞ք, կարծեմ այս ինչ որ ուրիշ բան է. (առանձին) գուցէ եւ այդ զգելի մուկն է:

Ճերմակեան:

Կացէ՞ք, ես կը նայեմ (կամենում է դրան մօսենալ):

Գայիսեն:

(Զանգակի պարանից բռնելով) Ա'չ, ես կը զանգահարեմ (զանգահարում է. կողմ) ես չեմ կարող նրան թողնել, հարկաւոր զէպքում նա ինձ կը պաշտպանէ. (Արան) նսակցէ՞ք, նսակցէ՞ք ինորում, պարտն Ճերմակեան:

Ճերմակեան:

(Առանձին) Ի՞նչ պատահեց . . . (բարձր) Տ. Գայիսենէ՛, ի՞նչ եղա՞ք, զուք վրապէւա՞ծ էք ի՞նչ ի՞նչ . . . Գայիսեն:

Ե՞ս . . . ի՞նձ.—ոչի՞նչ.

Ճերմակեան:

Գուցէ մի որ եւ է անսպասելի հանդամանք . . . չեմ կամ մենում խանգարել . . . թէեւ իմ զնալու ճանապարհ այնքան էլ . . . (պատուհանին մօսենում է) այս էլ ուրիշ փորձանք, սանդուխքը չ'կաց . . .

Գայիսեն:

(Առանձին) Աւելի լոււ. (Արան) տեսնում է՞ք, որ իմ զերին էք, նստեցէք եւ համբերութիւն ունեցէք. (Դրան ականց դնելով) լսում եմ, նա անշուշտ ճանկուում է եւ ծառաներիցն էլ ոչ ոք չկաց, (զանգահարելիս պարանը կտրվում է) ահա՛ այս էք պակաս:

Ճերմակեան:

Քայց գուք ի՞նչ անէք, զուցէ հիւանդ էք:

Գայիսեն:

Ի՞նչ ակասակը, ես ասող եմ որպէս երբէք չեմ եղած: Բեմի ետևից ձայն:

Դուք զանգահարեցի՞ք, ամիլի՞ն:

Գայիսեն:

Զանգի լարը կարեց եւ մարդ չ'կաց, խլացել է՞ք, ի՞նչ է, հը՛, պիծա՞ք: Միշաւում  
Բեմի ետևից ձայն:

Այս, մեր կաստն բազմոցի տակից բռնեց ու սասակուրը փախաւ, մինչեւ հիմի էլ այսակե նստած է:

Գայիսեն:

(Արագ դուռը բռնապալ) Այս ի՞նչ լիմարութիւն է, ինչ չու այս բանի իսկոյն ինձ չեք յայսառաք (Ճերմակեանին) ներկցէ՞ք (զնում է):

### III

#### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ (Առանձին)

Այս ի՞նչ է նշանակում. ինչո՞ւ գնաց, գուցէ նա կարծում է, թէ իւր բացակայութեան միջոցին ևս կարող եմ կտրան վրայի կատուով զմայլիլ. իսկ այս դուռն էլ չէ կարելի եղեք բաց անել ևւ թէ ուզարկել են փականագործ կանչելու. իսկ ա՛յժմ... զարմանալի է, շատ զարմանալի... ինձ ստիպեցին սպասուհանից մասել, մտածեցի զորս զալ՝ սահդուխքը չ'կայ, իսկ զոնիցը անկարելի է, փականքն է կոտրած. փականագործ, կատու... ոչի՞նչ չեմ հասկանում...

### IV

#### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ ԵՒ ԳԱՅԻՍՆԵ.

##### Գայիսնէ.

(Բեմի ետևից) Ա՛հ, Շուշա՞ն, ևս ձեզ ասում եմ, որ կատուն ոչ թէ մուկն է բռնել, այլ բրդի կծիկը, բայց եւ այնպէս զարձեալ կը նայեմ ձևոադրծիս զամբիւզում (մտնում է եւ դուռը փակում) ներեցէք, ևս ձեզ միայնակ թողեցի. բայց մի կարեւոր գործ...

##### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ.

(Առանձին) Քիսմէ, կատուն կարան վերայ է... (նրան) ևս միայն ձեր վերադարձին էի սպասում, որպէս զի ձեզ իմ հրաժեշտ ապլու պատիւը ունենամ (կամենում է դեպի դուռ զնալ):

##### Գայիսնէ.

(Արագ) 'Ի սէր Աստուծոյ, զուրը մի բաց անէ՛ք:

##### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ.

Ինչո՞ւ

##### Գայիսնէ.

Ինդրեմ այստեղ կացէք. ևս շատ հետաքրքիր բան ունիմ ձեր խօսելու, ինդրում եմ, զոնէ մի փոքր մնացէ՛ք:

##### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ.

Նստել կարելի՞ է:

##### Գայիսնէ.

Ա՛հ, այո՛, ինդրեմ նստեցէ՛ք. (նստում է եւ ձեռագործի գամբիւլլի վերցնում) զուք կարծեմ ինչ որ ասացիք վայրենի զաղանների մասին, այնպէս չէ՞, ասացէ՛ք, միթէ զուք երբ եւ իցէ հանդիպէ՞ էք վայրենի զաղանների. (ինձրում է կծիկները) 1, 2, 3, 4, 5, 6, 7...

##### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ.

Այո՛, ա. Գայիսնէ, իսկապէս մի անդամ ես...

##### Գայիսնէ.

Օ՛հ, պատմեցէք ինդրեմ, պատմեցէք (շարունակում է կծիկները ցոկել):

##### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ.

Մեծաւ հաճութեամբ, այդ գէտքը Բագւում պատահեց...

##### Գայիսնէ.

Բագւում. ա՛հ Աստուծ իմ, բայց միթէ Բագւում վայրենի զաղաններ կան:

##### ՃԵՐՄԱԿՆԵՍՆ.

Այո՛, բայց ոչ թէ աղաս, այլ երկաթեաց վանդակներում, այս Բագւում պատահեցաւ այս գէտքը. մի անգամ այնտեղ մի զաղանանց բերին, ուր շատերն էին այցելում, այնտեղ կային ասիւծներ, վազրեր, գայլեր, փղեր եւ այլն, մի անգամ երբ բաւականին մեծ բազմութիւն էր հաւաքւած եւ հետաքրքրութեամբ նայում էին թէ ահազին բան ինչպէս լավում է փոքրիկ զանուկը մէկ էլ յանկարծ իմ եսեւից լլուգում է մի սոսկալի մանչին, նայում եմ եւ անսում ահազին առիւծը, որը չ'կիտև մնացէս, փշւելով իւր վանդակը, ինձանից տաս քայլ հեռու կանգնած էր. հասարակութիւնը սոսկումով վազում էր գէտքի զուպը, աղմուկ, ձնչում, հառաչանքներ... զարհութանքը տիրել էր բարորդնեամ միայն չկորցնելով արիւթիւնս եւ ձեռքում էր բացի այս հովանոցից ոչինչ չունենա-

լով, ահռելի գաղանի հետ երես առ երես կանզնեցայ, եւ մէկ  
էլ յանկարծ . . .

Գայիխնել.

(Մեծ հետաքրութեամբ ըստիս, յանկարծ ձգում է զամ-  
րիւղը, որի միջից մուկն է բոշում) ա՞հ, ահա՛ նա՛ (ուշա-  
րափում է) նա է . . .

Ճերմակեան.

Ո՞վ, առի՞ ծը (հովանոցը ձեռինի պաշտպանութան ձեռով  
կանգնում է, յետյ նաև ուշարափ տեսնելով) Աստուած իմ,  
նա իրան վաս է զգում, իմ պատմութիւնը նրա վրայ այնպէս  
ազգեց որ . . . ա. Գայիխնէ՛, ա. Գայիխնէ՛, ուշքի եկէ՛ք, (նրա  
վրայ նայելով) նա անչարժ է, ինչպէ՞ս օգնեմ. չո՞ւր . . . սպի՛րտ . . .  
(դոնից դուրս է վազում):

V

ԳԱՅԻԽՆԵԼ (առանձին)

(Ուշի գաղով) Ի՞նչ պատահեց ինձ . . . ա՞հ, յիշում եմ,  
պարոն ձերմակեա՞ն, նա այսանդ չէ, իսկ այդ զգելիի մուկը  
դարձեալ կապու զգեստիո մէջ ինել . . . (ձյում է եւ շրջա-  
զգեստը հաւաքելով թափ է տաղիս եւ փախչում թեւի միւս  
կողմը) ահա՛ նա, ահա՛, տեսնում եմ, չարժվում է, ա՞հ, (վա-  
զում է պատհանի մօս, եւ արոռի վրայ բարձրանում) այս-  
տեղ ես ապահով եմ:

VII

ԳԱՅԻԽՆԵԼ ԵՎ ՃԵՐՄԱԿԵԱՆ.

Ճերմակեան.

(Զուրը ձեռինի արագ մժնում է) ահա՛ ջոր. (Գայիխ-  
նել բազկարոնի վրայ է բարձրանում) նա խելազարել է:

Գայիխնել.

Պ. Ճերմակեան:

Ճերմակեան.

Տ. Գայիխնէ՛:

Գայիխնել.

Դուք քաջ էք, այնողէս չէ՞:

Ճերմակեան.

Անսարակրոյ. բայց . . . (խորբում սեղանի վերայ է դնում  
շուրջը եւ վերցնում է հովանոցը):

Գայիխնել.

Դուք վայրենի գաղանների հետ էք կուել, նշանակում  
է ոչ մի բանից չէ՞ք վախենայ . . .

Ճերմակեան.

Այս', ոչնչից, (առանձին) ինչո՞ւ նա բազկաթոսի վրայ  
է բարձրացել:

Գայիխնել.

Ազատեցէ՛ք ինձ, 'ի սէր Աստուածոյ, ես կին եմ, ակար  
արարած, զգացոծ վախիս ու զգաններս չեմ կարող գիմա-  
նալ, ապաննեցէ՛ք, սովորնեցէ՛ք . . .

Ճերմակեան.

Ո՞ւմբ:

Գայիխնել.

Բրդի կծիկը կատուն բռնեց տարա:

Ճերմակեան.

Կատուն. (մեկուսի) վախից խելքը կորցրել է:

Գայիխնել.

*Ես սրբակ եմ*  
Ես նրան բազկաթոսի տակ տեսա:

Ճերմակեան.

Բազկաթոսի տակ ոչի՞նչ չեմ տեսնում:

Գայիխնել.

Այսանէ՛զ, այնտե՛զ է նա:

Ճերմակեան.

Բայց ո՞վ, ո՞վ:

Գայիանէ.

Մուկը:

Ճերմակեան.

(Ճշարով) Մուկ. ա՞հ, (վազում է եւ բոչում պատռհանի մօս ուրիշ բազկարռոյի վերայ) Տ. Գայլանէ, ես ամէն բանի պատրաստ եմ՝ հրամայեցէք ինձ բանել կոկորդիլոսը, խեղել վագրը, միայն ի սէր Աստուծոյ, ինձ ցոյց մի՛ տաք այդ սարսափելի անասունը, որ ինձ զարհուրեցնում է. մի՛ ցոյցնէք ինձ մուկը, կանչեցէ՛ք ծառաներին. զէ՛, կանչեցէ՛ք:

Գայիանէ.

Սյդ անօգուտ է, ծառաները տան միւս ծայրումն են, ինձ չեն լսի, զնացէք մի ուրիշին կանչեցէք:

Ճերմակեան.

Աշխարհն ինձ բնծացէք, աեղիցս չեմ շարժւի, ես անդամարդ եմ: Ի՞ն կորուստի այս աշխարհին:

Գայիանէ.

Բայց եւ անոպէս մենք չենք կարող այս յիշար եւ ծիծաղաշարժ գրութեան մէջ մնալ:

Ճերմակեան.

(Աչյով մուկն է վնտում):

Գայիանէ.

Տեսնո՞ւմ էք:

Ճերմակեան.

Ոչինչ չեմ տեսնում, բայց ո՞րտեղից եկած...

Գայիանէ.

Իմ ձեռագործի զամբիւղից ցատկեց, ա՞հ, կարծեմ շարժում է:

Ճերմակեան.

(Կամենաղով մի ուր յատակի վրայ դնել, կրկին արոռի վրայ և բարձրացնում) ո՞ւր է, ո՞ւր ՚ի սէր Աստուծոյ, Ման ինչպէս առաջում է ինձ այս մարմարգութիւնը (շիշից ցուր է խմում):

Գայիանէ.

Պ. Ճերմակեան, զուք ասացիք, թէ սիրում էք ինձ, խնդրում էք իմ ձեռքը, ես համաձայն եմ, միայն թէ ազատեցէք ինձ այս անձինի անսառնից:

Ճերմակեան.

Տ. Գայլանէ, հաւասարցէք ինձ, որ ես հիացած եմ, բաղդասոր, ես պատրաստ եմ... բայց ինքս ինձ լաւ եմ ձանաշում, եթէ մինչեւ անգամ մկան դիալիմ, իսկոյն կը մեռնեմ, իսկ եթէ ես միռնեմ, միեւնոյն է, չեմ կարող ձեզ հետ ամուսնանալ:

Գայիանէ.

Ա՞հ, այս ի՞նչ յուսահասութիւն է, բայց վերջապէս պէտք է մի բան անել թէ ո՞չ, եթէ մի կերպ գուռը բաց անէիք, կարող էին մեզ լսել:

Ճերմակեան.

Հիանալի միաք, փոքեմ հովանոցով աեմմեմ, (երկար շանելերից յետյ դուռը հովանոցով բաց է անում):

Գայիանէ.

Բռակօ՛, Կեցցէ՛ հիմա նրան վախեցնէնք, (զցում և բաշկինակը):

Ճերմակեան.


Դեմինը մոսածը չէ վախենում, այժմ հերթը իմն է (հովանոցը բաց ու խորի և անում) շը՛, քը՛ շը՛...

Գայիանէ.

Զէ՛ վախենում. (ծափ և զարևում):

Ճերմակեան.

Սպասեցէք, մի հանձարեղ խորհուրդ (կատուի նմանեցնելով) միա՛ւ, միա՛ւ, միա՛ւ... (մուկը վազում է):



Պայիտնել.

Գնա՛ց, գնա՛ց, շո՛ւտ գառը փակեցէ՛ք:

Ճերմակեան.

(Դուռը փակեղով) Եթի ֆօնը հաստատում է, թէ բնազդումը երբէք չէ խարում անաստներին, իսկ այս մուկը ինձ կատու կարծեց. օ՛, բնազդառթեան համար սա մի կարեւոր դիւտ է: (ձեռիլ Պայիտնելին մեկնեղով):

Պայիտնել.

Վերջապէս, եթէ այս երկար շարունակւէր եռ կը խելաւ դարւէի. բայց Աստուած իմ, զուք ինչ թիւր կարծիք կազմեցիք թէ իմ, եւ թէ իմ քաջութեան մասին:

Ճերմակեան.

Ի՞նչ ասեմ Ճեղ, ես մինչեւ անգամ 'ի նկատի ունենալով այսպիսի մի պարզեւ, ինչպէս Ճեր Ճեռքն է, չկարողացայ իմ զգուանքս ...

Պայիտնել.

Ա՛ն, այդ եւս չխօսենք այդ բանի մասին. ամէն ինչ վերջացած է եւ անշուշտ մեր փոխազարձ բազդաւորութեան օգախին:

Ճերմակեան.

Խոստովանուում եմ, որ իս յանցաւոր եմ, բայց ամենքից աւելի ինձ այնէն վազովեցուում, որ զուք ինձ վախկոս պիտի կարծէք:

Պայիտնել.

Օ՛, անհոգ եղէք, զիաւում որ զուք քաջ էք, մինչեւ անգամ գործով կարող էք այդ ապացուցանել . . .

Ճերմակեան.

Ի՞նչպէս. Հրամայեցէ՛ք, եւ Ճեղ աղիսի խօսք եմ տալիս, որ ես Ճեր բոլոր յանկոյթածը կը կատարեմ:

Պայիտնել.

Խօսք էք տալիս, լա՛ւ, սարեհանձեցէք այն ճամբով գնալ՝ ինչով որ եկաք, այսինքն պատուհանից, ես վախենում եմ որ եթէ զուք դասաբրաց անէք՝ այդ զզուելի մուկը զարձեալ կդաւ այսուել:

Ճերմակեան.

Ուրեմն գարձեամը պէտք է պատուհանից գնա՛յ, բայց գիտէ՞ք, որ մինչեւ անգամ սանդուխը չ'կայ:

Պայիտնել.

Գիտէ՞մ:

Ճերմակեան.

Գիտէ՞ք, շատ բար, (պատուհանին և մօտենում եւ աշխայ չափում և բարձրութիւնը, յետոյ արագ վազում և դպի պատուհանը իր բէ ցատկեղու համար եւ կանգնում): Ներեցէք տ. Պայիտնել, արդեօք մի պատաստ սենեակ չունէ՞ք, որտեղ կտրելի լինէք մահակալ դնել:

Պայիտնել.

Այո՛, կա՛յ, բայց ինչո՞ւ էք հարցնու՞մ: զուու որ ես Ճերմակեան.

Կա՛յ, հիանա՛յի, հաւատացած եմ որ Ճեռքս կամ ոտքս պիտի կոտրեմ. զրա համար էլ ճամփուց ինսդրում եմ Ճեղ մի, կամ մի ամիս ու կէս հիւրնկալել ինձ:

Պայիտնել.

Ամիս ու կ'էս:

Ճերմակեան.

Նայերժ հանգամանքներին, գուցէ եւ երկու պատէս ուրեմն. սենեակը պատրաստեցէք եւ բժիշկ կամքցէք. (Կամենում և պատուհանից ցատկել):

Պայիտնել.

(Նոյն խաղը) Բայց հարկաւոր չէ, հարկաւոր չէ:

Ճերմակեան.

Եթէ մինչեւ տնտեսմ զուք ինձ ծնկաչոք էլ աղաւչք, միենայն է, ոչ ո՛ք, եւ ո՛չ մի բան չէ կարազ զբժել տալ ինձ խոսքիցն, սենեակը պատրաստեցէք, շատ չէ, երկու ամսաց համար (կամենում և ցատկել):

Պայիտնել.

Կացէ՞ք, Ճեր խօսքը ես Ճեղ եմ վերագարձնում:

**Ճերմակեան.**

Չեմ ընդունի՞ միայն կինը կարող է խը ամուսնուն տոիւ-  
պել, որ նա դրժէ իւր առած ազնիւ խօսքը. դուք մերժեցի՞ք  
մնձ, դուք իմ կինս չպէտք է լինեք, ուրիմն մնա՞ք բարեաւ...  
(կամենում և ցատկել):

**Գայիսնէ.**

(Առանձին) Բոնւեցայ. (Արան) Կթէ այդ միակ միջոցը  
կարող է ձեզ յետ կանգնեցնի, այն ժամանակ... (մեկնում և  
ձեռիլ):

**Ճերմակեան.**

Դուք համաձա՞ն էք. ո՞հ բաղդաւորս թեանս . . .

Բեմի ետեփց ձայն.

Տիկին, մուկը բանեց:

**Գայիսնէ.**

(Ձեռիլ ճերմակեանին տալով) Ա՛հ, կարծեմ միեւնոյն  
ժամանակ երկու մինչը բոնւեցան . . .

**Ճերմակեան.**

(Ձեռիլ համբուրելով) Եսկ ի՞նչ կը հրամայէք ձեզ ըն-  
ծայել հարսանիքի օրը . . .

**Գայիսնէ.**

Մի մկան թակարդ . . . :

ՎԵՐՋ



ՀՀ Ազգային գրադարան



NL0596560

